Առևտրային տնօրինությունների վերահսկողական խմբերի կողմից հայտնաբերված կասկածելի և խափանված ջրաչափերի ցուցակները ներկայացվում են Տեխնիկական տնօրինությանը՝ նորերով փոխարինելու նպատակով: Փոխարինված ջրաչափերը ներկայացվում են գնման և նախնական փորձաքննության: Հունվար ամսին համաձայն ջրաչափի գնման և նախնական փորձաքննության արձանագրությունների թվով 438 ջրաչափերի համար կազմվել են անսարքության և միջամտության արձանագրություններ: Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել մոտ 60.547մ<sup>3</sup> վերահաշվակված հասույթ:

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Տարեթիվ	Երևան	Մարզեր
	Հունվար	
2017թ.	13.7	11.0
2018թ.	14.0	12.1
Տարբերությունը	0.3	1.1

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. Գանձուկ

2018թ. հունվարի 1-ից փոխվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները: Նոր և նախկին սակագների գումարային տարբերությունը սուբսիդավորվում է ՀՀ կառավարության կողմից: Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսագանգեր և այլն: Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Հունվար
Երևան	Առաջադրանք	1.145.130
	Հավաքագրում	809.156
	%	70.66
Մարզեր	Առաջադրանք	485.310
	Հավաքագրում	404.088
	%	83.26
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440
	Հավաքագրում	1.213.244
	%	74.41

2.4 Դեբիտորական պարտքեր

Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից կնքվում են պարտքերի մարման ժամանակացույցեր, որոնք Ընկերության համար հանդիսանում են վճարման ընդունելի երաշխիքներ: Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է թվով 257 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 20.7մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու նպատակով առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

2018թ. հունվար ամսին 716 բաժանորդի պարտքերի մասով դատական հայցեր են ներկայացվել մոտ 49մլն.դրամ պահանջով:


Դեբիտորական պարտքեր վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում դադարեցվում է իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:


Տարածաշրջան	Պարտքը 01.02.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում հունվար ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	1.982.111	1.097.194
Բնակիչ-բաժանորդներ	1.351.042	703.364
Իրավաբանական անձեր	631.069	393.829
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1.652.136	516.503
Բնակիչ-բաժանորդներ	1.408.606	384.662
Իրավաբանական անձեր	243.530	131.840
Ընդամենը, այդ թվում	3.634.247	1.613.696
Բնակիչ-բաժանորդներ	2.759.648	1.088.027
Իրավաբանական անձեր	874.599	525.67

Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի առկա պարտքերից առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները և բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները, ինչը բավական դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի հստակեցման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)



2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



## 2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.02.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (սորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	383.813	286.377	74.61	18.724	13.278	70.91
	Առանց ջրաչափի	11.077	2.112	19.07	946	10	1.06
Մարզեր	Ջրաչափով	281.881	192.099	68.15	12.032	6.943	57.70
	Առանց ջրաչափի	42.278	6.075	14.37	1.406	8	0.57
Ընդամենը	Ջրաչափով	665.694	478.476	71.88	30.756	20.221	65.75
	Առանց ջրաչափի	53.355	8.187	15.34	2.352	18	0.77

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.02.2018թ. դրությամբ հաշվառված պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	510.527	281.334	55.11	21.710	3.560	16.40
Մարզեր	328.712	78.155	23.78	13.877	1.555	11.21
Ընդամենը	839.239	359.489	42.84	35.587	5.115	14.37

Խափանված ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներ՝ դրանց հետագա փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2.935, իսկ Մարզերում 933 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՏ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 148, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 333 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկը կատարվում է ջրաչափի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

*Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր*

Փողոց, շենք	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Զ.Անդրանիկի թաղ. 10	51	32	62.7
Զ.Անդրանիկի թաղ. 6	53	35	66.0
Զ.Անդրանիկի թաղ. 8	55	49	89.1
Շերամի 1	58	28	48.3
Շերամի 101	83	67	80.7
Շերամի 103	109	86	78.9
Շերամի 105	203	156	76.8
Շերամի 107	164	145	88.4
Շերամի 109	112	85	75.9
Շերամի 11	61	49	80.3
Շերամի 111	104	80	76.9
Շերամի 113	183	158	86.3
Շերամի 115	199	131	65.8
Շերամի 13	93	63	67.7
Շերամի 15	97	70	72.2
Շերամի 17	144	111	77.1
Շերամի 19	58	34	58.6
Շերամի 21	59	45	76.3
Շերամի 23	100	89	89.0
Շերամի 25	104	91	87.5
Շերամի 27	146	127	87.0
Շերամի 29	81	64	79.0
Շերամի 3	98	77	78.6
Շերամի 31	59	44	74.6
Շերամի 33	56	47	83.9
Շերամի 35	79	71	89.9
Շերամի 37	57	40	70.2
Շերամի 39	141	107	75.9
Շերամի 41	59	46	78.0
Շերամի 43	58	41	70.7
Շերամի 47	96	68	70.8
Շերամի 49	100	84	84.0
Շերամի 5	101	63	62.4
Շերամի 51	145	113	77.9
Շերամի 53	144	118	81.9
Շերամի 55	149	107	71.8
Շերամի 57	103	67	65.0
Շերամի 59	175	140	80.0
Շերամի 61	89	73	82.0
Շերամի 63	73	60	82.2
Շերամի 65	76	52	68.4
Շերամի 67	111	91	82.0
Շերամի 69	146	116	79.5
Շերամի 7	73	57	78.1

Փողոց, շենք	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի 71	152	119	78.3
Շերամի 77	103	82	79.6
Շերամի 79	176	146	83.0
Շերամի 81	88	68	77.3
Շերամի 83	70	52	74.3
Շերամի 85	72	62	86.1
Շերամի 87	199	166	83.4
Շերամի 89	145	129	89.0
Շերամի 9	74	53	71.6
Շերամի 93	102	82	80.4
Շերամի 95	72	66	91.7
Շերամի 97	72	54	75.0
Շերամի 99	178	144	80.9
Սվաճյանի 34	71	61	85.9
Սվաճյանի 36	69	55	79.7
Սվաճյանի 38	209	156	74.6
Սվաճյանի 40	107	66	61.7
Սվաճյանի 44	121	85	70.2
Սվաճյանի 46	74	57	77.0
Սվաճյանի 48	70	62	88.6
Սվաճյանի 50	162	130	80.2
Սվաճյանի 52	106	78	73.6
Սվաճյանի 56	107	72	67.3
Սվաճյանի 58	76	65	85.5
Սվաճյանի 60	70	57	81.4
Սվաճյանի 60/1	85	65	76.5
Սվաճյանի 62	121	106	87.6
Օհանովի 1	91	56	61.5
Օհանովի 10	108	80	74.1
Օհանովի 11	52	38	73.1
Օհանովի 12	89	83	93.3
Օհանովի 14	70	61	87.1
Օհանովի 16	73	50	68.5
Օհանովի 18	71	47	66.2
Օհանովի 2	173	119	68.8
Օհանովի 20	95	64	67.4
Օհանովի 24	134	84	62.7
Օհանովի 3	79	62	78.5
Օհանովի 4	147	120	81.6
Օհանովի 5	101	80	79.2
Օհանովի 6	126	102	81.0
Օհանովի 7	80	62	77.5
Օհանովի 8	111	85	76.6
Օհանովի 9	80	46	57.5
ԸՆԴԱՄԱՏՈՒՄ	9136	7054	77.2

2018թ. հունվար ամսից Նոր Նորքի 7-րդ գանգվածի և Ջրվեժի Մայակ-Բանավան թաղամասերում մեկնարկել են թաղամասային ծրագրով ջրաչափերի փոխարինման աշխատանքները:

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%	Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
7 Չանգված 4	184	135	73.4	Բանավան 1	82	17	20.7
7 Չանգված 5	72	49	68.1	Բանավան 2	40	13	32.5
7 Չանգված 8	74	40	54.1	Բանավան 3	24	19	79.2
7 Չանգված 9	71	56	78.9	Բանավան 4	27	26	96.3
7 Չանգված 10	68	45	66.2	Բանավան 5	114	82	71.9
7 Չանգված 11	69	50	72.5	Բանավան 6	112	80	71.4
7 Չանգված 12	73	48	65.8	Բանավան 7	93	19	20.4
7 Չանգված 13	74	61	82.4	Բանավան 11	72	49	68.1
7 Չանգված 14	72	56	77.8	Բանավան 12	65	54	83.1
7 Չանգված 15	75	57	76.0	Բանավան 13	69	56	81.2
7 Չանգված 16	72	49	68.1	Բանավան 14	66	49	74.2
7 Չանգված 17	66	35	53.0	Բանավան 15	73	62	84.9
7 Չանգված 18	70	43	61.4	Բանավան 16	71	58	81.7
7 Չանգված 19	67	41	61.2	Բանավան 17	71	57	80.3
7 Չանգված 20	64	33	51.6	Բանավան 18	31	20	64.5
7 Չանգված 21	69	2	2.9	Ընդամենը	2250	1461	64.9

## 2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

Շարունակակալում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրությունները ինտերակտիվ համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն հայտնաբերված հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:




Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	55	22.604	4.216.408
Մարզեր	145	89.072	15.649.673
Ընդամենը	200	111.676	19.866.081

Արձանագրությունների հիման վրա հաշվարկված գումարները, ապօրինություն իրականացրած անձանց կողմից չվճարելու դեպքում, փոխանցվում են Իրավաբանական վարչություն՝ սահմանված կարգով բռնագանձման նպատակով:

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ






### 3.1. Ջրամատակարարման շարունակականություն


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի հունվար ամսվա շարունակականության տվյալները, որոնք կազմել են 98.6%, ինչը 0.2%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրանջատման փաստացի տևողությունն ու հայտարարված գրաֆիկների միջև դեռ առկա է զգալի տարբերություն:

Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)



Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածքային տնօրինություններում թվով 46 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լուգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 6-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:










### 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում



Հաշվետու ամսվա ընթացքում Էներգովերահսկողության խմբի աշխատանքների, վերահսկողության, հաշվառման բարելավման և պոմպերի աշխատանքի դադարեցման արդյունքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 60.615 Կվտ/ժ. (10.12 %) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:



Երևան քաղաքի բակային պոմպեր



Մեծ ուշադրություն է հատկացվում նոր տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների ծախսերին, որոնց ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով ոչ փրայն կանխվել են խախտումները, այլև հայտնաբերվել են յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրները:

Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացված որոշ հասցեներ, որտեղ հունվար ամսվա ընթացքում արձանագրվել են էլ. էներգիայի տնտեսումներ.






Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 216 հասցե: Թվով 8 պոմպակայանում հայտնաբերվել և վերացվել են թերություններ:

Քաղաք	Հասցե	Կատարված աշխատանք	Ամսկան / Գվտ/ժ
Երևան	Արարատյան 3/4 պոմպակայան	Հաշվիչի սխալանք (Կարգավորված է)	6800
Երևան	Գյուլբենկյան 43	Հզորության փոփոխում 2,2-0,8	108
Երևան	Մաշտոց 15Ա	Ռելեի կարգաբերում	504
Երևան	Պարոնյան 1	Ռելեի կարգաբերում	360
Երևան	Շարուրի 26	Ռելեի կարգաբերում	360
Գյումրի	Շիրակացի 52	Ռելեի կարգաբերում	144
Գյումրի	Շիրակ Եր. Խճ. 16,24,25,26	Հավելագրում (Գրություն ՀէՑ)	3950
Էջմիածին	Շահումյան 69,71,73	Ռելեի կարգաբերում	432
Ընդամենը			12658


Հունվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 218.547կՎտ/ժամ (27.43%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ.էներգիան*





Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 1.173.816կՎտ/ժամ (22.59%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպասած էլ.էներգիան



Հավետու ամսում Ապարանի «Եզնակ» պոմպակայանի «Ժամեր» ՕԿՋ պոմպի վրա տեղադրվել է ինվերտորը համակարգ: Նախկինում պոմպն աշխատում էր 8 ժամ՝ 100.8մ3/ժ արտադրողականությամբ՝ ծախսելով 1 ժամում 53կՎտ: Այժմ, նույն քանակի ջուրը մղելու համար պոմպն աշխատում է 11ժ 20 րոպե՝ 70մ3/ժ արտադրողականությամբ՝ ծախսելով 1 ժամում 31.5կՎտ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Ապարանի «Եզնակ» պոմպակայանում հնարավոր է կատարել էլ.էներգիայի տնտեսում: Ապարանի համար մեկ խորքային հորում տեղադրված ինվերտորային համակարգը տեղափոխվել է «Եզնակ» պոմպակայանից «Ժամեր» ՕԿՋ մղվող պոմպի վրա: Արդյունքում տնտեսվել է 16% էլ.էներգիա, որը կազմում է օրական 198կՎտ/ժամ:




Տաշիր քաղաքը սնող «Նովոսելցովո» պոմպակայանում փորձնական տեղադրվել է 37կՎտ հզորությամբ ինվերտորային համակարգ, ինչի արդյունքում տնտեսվել է տարեկան 80000կՎտ/ժամ կամ 18% էլ. էներգիա, ինչը կկազմի տարեկան 3.200.000դրամ:

### 3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ


- Ջրահեռացման ցանցի թարմացում ԱՏ համակարգում թվայնացում և տվյալների համալրում՝ համաձայն տեղամասերի կողմից կատարված ճշտումների
- «Արաբկիր» տեղամասի սպասարկման տարածքի ջրամատակարարման գոտու քարտեզի կազմում և տպում:
- 1-85 հեռախոսակենտրոնի կողմից ստացված բողոքների, վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում ստացված տվյալների ամենամայա քարտեզների պատրաստում:
- Արտադրատեխնիկական բաժնի համար Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի և Գր.Լուսավորչի փողոցի խաչմերուկի ավտոճանապարհային գետնանցման, ինչպես նաև Պարոնյան փողոցի հեղեղատար համակարգի և անձրևընդունիչ հորերի կառուցումն սխեմաների պատրաստում և գծագրում:
- Ջրամատակարարման քարտեզների ճշգրտման նպատակով ԱՕ ֆորմատի աշխատանքային քարտեզների կազմում և տպագրում:
- Գառնի, Արարատյան 3-4, Ապարան, Կաթնաղբյուր, Արզական, Գյումուշ, Շոք-Շոք, Ծարավաղբյուր, Արզնի, Երևան ՇԷԿ ջրարտադրության օբյեկտների թվայնացում՝ ըստ կոորդինատների և համապատասխան բազաների ստեղծում:
- Արագածոտն, Սյունիք, Գեղարքունիք մարզերի կոյուղագծերի երկարությունների, ինչպես նաև Երևան քաղաքի ջրագծերի երկարությունների հաշվարկում:
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող բնակավայրերի նոր ձեռք բերված քարտեզների կոորդինատային համակարգի տեղափոխում «WGS 1984 UTM Zone N38» համակարգ (ըստ «google» կոորդինատի):
- 5 գյուղերի քարտեզների տեղափոխում «Autocad» ծրագրից «ArcGis» ծրագիր, շերտերի տարանջատում ըստ գործառնական նշանակության:
- 23 գյուղերի քարտեզների բազայի ստեղծում, միավորում նախկինում ստեղծված էլեկտրոնային քարտեզներին:
- Ջրագծերի, կոյուղագծերի, փականների, դիտահորերի, ՕԿՁ-ների (Արմավիրի, Լոռի, Շիրակի մարզերում) վերաբերյալ տվյալների տրամադրում:
- Հայաստանի քարտեզի վրա «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող բնակավայրերի առանձնացում և գունավորում:
- «Բնտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշգրտում՝ տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ համատեղ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:
- «Bentley» ծրագրային փաթեթի տեղադրում և գործարկում «ArcGIS»-ի հետ համատեղ մեկ ընդհանուր հարթակում, ինչպես նաև դրա գործարկումը, որպես անկախ գործիք:
- Պահանջված համապատասխան ձևաչափի փաթեթի պատրաստում և տրամադրում՝ Կադաստրի պետական կոմիտե երկրատեղեկատվական շտեմարանի համալրման նպատակով:

### 3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ


- Հաշվետու ամսում կարգավարների խումբը «SCADA» և «LOCATOR» համակարգերի միջոցով առցանց հետևել և կառավարել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքը, ջրամբարների լցվածությունը, ճնշումային լոգերների, ջրաչափական սարքերի աշխատանքը և բաշխիչ ցանցի ջրում առկա ֆագոցողային քլորի համապատասխանությունը սահմանված չափաբաժիններին:
- «SCADA» հեռակառավարման ծրագրի միջոցով ստացված տվյալներից պարզվել է, որ «Քասախ 1» ՕԿՁ-ի էլքը կտրուկ ավելացել է 80լ/վ-ով՝ 160լ/վ-ից հասնելով 240լ/վ-ի: Այդ մասին տեղեկացվել է «Մաշտոց» տեղամասը, որի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարի վայրը՝ «Դավիթաշեն» 4-րդ թաղամաս: Վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում D=300մմ ջրագծի վթարը վերացվել է գոդման միջոցով:




● Իսակով փողոցում տեղադրված ծախսաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ տվյալ փողոցում ջրաքանակը կտրուկ նվազել է, ինչի մասին տեղեկացվել է «Շահումյան» տեղամասը: Տեղամասի աշխատակիցների կողմից վերանորոգվել է Իսակով փողոցով անցնող ջրագծի խափանված ճնշման կարգավորիչ փականը:




● «SCADA» հեռակառավարման ծրագրից ստացված տվյալներից պարզվել է, որ «Լուկաշին» թաղամասով անցնող ջրագծի ջրաչափը ֆիքսում է նորմայից 40լ/վ-ով պակաս ջրաքանակ: Այդ մասին հաղորդվել է «Մաշտոց» տեղամասին, որի աշխատակիցների կողմից պարզվել է, որ դեպի «Լուկաշին» թաղամաս ջրագծի փականը ամբողջությամբ փակվել է նույն թաղամասի բնակչի կողմից, ինչը պայմանավորված է եղել բնակչի հասցեում տեղի ունեցած ներքին ցանցի ջրագծի վթարով: Տեղամասի աշխատակիցների կողմից ջրագծի վթարը վերացնելուց հետո փականը բացվել է և վերականգնվել է «Լուկաշին» թաղամասի ջրամատակարարումը:




● «Զող» ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալների վերլուծությունից պարզվել է, որ տվյալ ջրամբարի լցվածության նիշն օրեցօր նվազում է, ինչի մասին հաղորդվել է «Արարատ» տեղամասին: Տեղամասի աշխատակիցները «Արարատ» ՕԿՁ-ից դեպի «Զող» ՕԿՁ-ն ընկած հատվածում հայտնաբերել են Q=20լ/վ ջրի վթար: Իրականացված վթարավերականգնողական աշխատանքներից հետո դեպի «Զող» ՕԿՁ ջրաքանակն ու լցվածության նիշը կարգավորվել են:




● Ռաֆֆի փողոցի ջրաչափի տվյալներից պարզ է դարձել, որ տվյալ փողոցի ջրի ճնշման կարգավորիչը խափանվել է: Այդ մասին տեղեկացվել է «Շահումյան» շահագործման տեղամասի աշխատակիցներին, որոնց կողմից իրականացված վերանորոգումից հետո Ռաֆֆի փողոցի ջրամատակարարումը վերականգնվել է :



● «Խարբերդ» ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալները պարզվել է, որ «Արարատյան» պոմպակայանից դեպի «Խարբերդ» ՕԿՁ մղվող ջրատարի վրա առաջացել է վթար: Դրա պատճառը կայանում է նրանում, որ տվյալ պոմպակայանում պոմպի աշխատանքի ժամանակ «Խարբերդ» ՕԿՁ-ի մակարդակը 1 ժամում պետք է բարձրանար 35սմ, այն դեպքում, երբ տվյալ ժամանակահատվածում ամբարի մակարդակը նվազել է: Տեղեկությունը հաղորդվել է «Մասիս» տեղամասին, որի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարված հատվածը: Զոդման միջոցով վթարը վերացնելու համար անջատվել է «Արարատյան» պոմպակայանից տվյալ ուղղությամբ աշխատող պոմպը:




● «Քասախ 2» ՕԿԶ-ի ելքի ջրաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ ջրաքանակը 00:00-06:00 ընկած ժամանակահատվածում ավելացել է 20լ/վ-ով: Այդ մասին հաղորդվել է «Մաշտոց» տեղամասին, որի աշխատակիցների կողմից «Արարատ» գոլֆ ակումբի մոտ հայտնաբերված վթարը վերացրել են գոման աշխատանքների իրականացման միջոցով:



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ  
ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳ







### 4.1. Համակարգչային ցանց

Հունվար ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքները.

- Երևան քաղաքի «Վեռլիա Ջուր» ՓԲԸ բոլոր գրասենյակներում իրականացվել է համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների գուքագրում, ճշտվել է Ընկերության բոլոր հասցեներում առկա համակարգչային տեխնիկայի քանակական տվյալները:

- «Արևելք» ՏՏ «Արմավիր» տեղամասի նոր՝ քՊԱրմավիր, Շահումյան 2 հասցեում կատարվել են համակարգչային և հեռախոսային ցանցի մոնտաժման աշխատանքներ, համակարգչային տեխնիկայի տեղափոխություն, տեղադրում, կարգաբերում, միացում Ընկերության միասնական օպտիկամանրաթելային ցանցին:

- Ջրաչափերի լաբորատորիայի համար ձեռք են բերվել մոնտաժ ֆոտոնկարահանման կանգնակ-հենարաններ իրենց հարակից մալուխներով և հեռակառավարման վահանակներով:

- Հիմնանորոգվել են թվով 4 A3 ֆորմատի տպող-պատճենահանող սարքեր, այնուհետև տրամադրվել են երկուական Մարգարի Տարածաշրջանի Առևտրային տնօրինությանը և «Արևելք» Տարածաշրջանի Տնօրինությունը:

### 4.2 Ինտերակտիվ համակարգ

Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից «Ինտերակտիվ» համակարգում մշակվել և իրականացվել են մի շարք փոփոխություններ կապված Առևտրային տնօրինություններում տեղամասերի տեղափոխման հետ:

Քանի որ Ընկերության Առևտրային տնօրինություններում աշխատակիցների ընդունման և ազատման շարժը բավականին շատ է, հետևաբար աշխատակիցներին կցված գույքի վերահսկումը դժվարանում է: Այդ իսկ պատճառով «Ինտերակտիվ» համակարգում ստեղծվել է հնարավորություն Առևտրային տնօրինությունների ազատված աշխատակցին կցված գույքի հանձնման-ընդունման գործընթացը կարգավորելու համար: Այն թույլ է տալիս հստակ տիրապետել գույքի շարժին և կառավարել գույքի պատշաճ ընդունում-հանձնումը:

01.01.2018թ-ից ՀՄԿՀ-ի որոշման հիման վրա փոխվել է ջրամատակարարման և ջրահեռացման սակագինը, հետևաբար փոխվել է նաև ապօրինի ջրօգտագործողների արձանագրությունների հաշվարկման բանաձևը: «Ինտերակտիվ» համակարգում կատարվել են մի շարք փոփոխություններ կապված խախտման արձանագրությունների հաշվարկման և ջրաչափերի լաբորատոր հետազոտությունների հայտնաբերված խախտումների հաշվարկման հետ:

Ավելեցվել է փակ դռների տեսուչների այցերի նկարների դիտման նոր հնարավորություն, որով հնարավոր կլինի հաստատել տեսուչի այցը բաժանորդի տուն և կառավարել տեսուչի աշխատանքը:

Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրավորման խմբի և Տեխնիկական տնօրինության ԱՏ համակարգի խմբի հետ համատեղ մշակվել է մարզերի քարտեզագրման աշխատանքների փուլային ռազմավարություն: Առաջին փուլով բաժանորդների միացումների տեղադիրքերը ամրագրվելու է ԱՏ համակարգում տեսուչների կողմից կատարված նկարների կոորդինատների հիման վրա: Անհրաժեշտ տվյալները արդեն իսկ մշակվել և տրամադրվել են ԱՏՀ խմբին:


### 4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ


Հաշվետու ամսվա ընթացքում աշխատանքների օպտիմալացման նպատակով անջատվել են «Բիլայն» կապի օպերատորի կողմից տրամադրված և ֆիքսված 12 հեռախոսահամար՝ փոխարենը գործարկելով «VoIP» հեռախոսահամարները («Ռոստելեկոմ» և «Յուքոմ»):

### 4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում Ռազմավարության և Մշտադիտարկման վարչության համար ձեռք է բերվել A3 ֆորմատի նորագույն «Epson L-1455» գունավոր բազմաֆունկցիոնալ սարք:

# ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ






Հաշվետու ամսում պարբերաբար լրատվամիջոցներին են տրամադրվել մամուլի հաղորդագրություններ՝ համակարգում իրականացվող շինարարության մասին, իսկ դրանից որոշները նաև հրապարակվել են Հայաստանի Հանրապետություն, Իրավունք, Հայկական Ժամանակ, Ժողովուրդ եւ Առավոտ թերթերում ու shamshyan.com լրատվական կայքում:

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվորեն կապ է պահպանվել ՋԼՄ-ների հետ, ժամանակին պատասխանվել են լրագրողների հարցերին ու ներկայացվել անհրաժեշտ պարզաբանումներ, փորձ անելով դրա շնորհիվ թույլ չտալ «Վեոլիա Ջու» Ընկերության գործունեության հանիրավի քննադատություն:

Սակայն հատկապես կարևոր է եղել Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Շերամի փողոցում ջրաչափերի զանգվածային փոխարինման իրականացվող ծրագրի ժամանակ բնակիչների բողոքների առթիվ ՋԼՄ-ների քննադատության նվազեցումը: Մասնավորապես գործին օգնել է Հանրային հեռուստատեսությամբ ու Հանրային Ռադիոյով համապատասխան պարզաբանումների ներկայացումը:

Հունվարին ավարտվել են «Վեոլիա Ջու» Ընկերության պաշտոնական veolia.am կայքի պատրաստման, համապատասխան նյութերով ապահովման ու ձևավորման աշխատանքները, ժամանակին շատ քիչ թվով խնդիրներ, որոնց լուծման վերաբերյալ Ծառայությունը դիմել է Պրահա, Վեոլիա Գրուպի Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի գոտու տնօրինությանը: Իսկ մինչ այդ շարունակվել է կանոնավոր սպասարկվել yerevandjur.am կայքը, «Վեոլիա Ջու» Ընկերության պաշտոնական էջը ֆեյսբուքում, ինչպես նաև դրանցով ստացվող սպառողների դիմումները՝ Ծառայության առջև դրված ամենօրյա խնդիրների լուծման նպատակով:



**ՈՐԱԿԻ,  
ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ  
ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





## 6.1 Փաստաթղթերի մշակում

● ՈԱԱ ծառայությունը, ելնելով համակարգերում տեխնաձին վթարների կանխարգելմանը և բացառմանը, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում իրականացրել է քլորակայանների, քլոր տեղափոխող մեքենաների, ամբարձիչ մեքենաների տեխնիկական անվտանգության թվով 52 վկայագրի Հավատարմագրված մարմնի՝ «Դավի տեխնիկական անվտանգության ծառայություն» ՍՊԸ-ի փորձագետների կողմից փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների ստացման աշխատանքները, ինչպես նաև թվով 3 ամբարձիչ և ինքնաբարձիչ-մանիպուլյատոր հարմարանքով կահավորված ավտոմեքենաների տեխնիկական անվտանգության վկայագրերի մշակման աշխատանքներ:

Որակի, Առողջության և Անվտանգության Օտարաբյուրում

**VEOLIA** Ջուր **«ԵՆՈՒՄ ԶՈՒՐ» ՓԲԸ** **QFS**

«Հաստատում են»  
«Կալյա Ջուր» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն Կ. ԼՇՅԵ

Կ. Տ.  
\_\_\_/\_\_\_/2017թ.

**ՄԱԲԱՐՁԻՉ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՑԱԳԻՐ**



Փաստաթղթի պատրաստման ամսաթիվը	Փաստաթղթի պատրաստման պատասխանատուի անունը, ազգանունը, ազգայնությունը	Փաստաթուղթը պատրաստված է 2 օրվա ընթացքում	Տարբերակ
18/12/2017	ՈԱԱ Օտարաբյուրի տնօրեն Դավիթ ՄԱՍՏՍԱՆ		Վ.02
Փաստաթուղթը կամուկանքից է Գլխավոր գործառնական տնօրեն Գ. ԳՐԿՈՂՑԱՆԻ հետ		[Ստորագրություն]	

Որակի, Առողջության և Անվտանգության Օտարաբյուրում

**VEOLIA** Ջուր **«ԵՆՈՒՄ ԶՈՒՐ» ՓԲԸ** **QFS**

«Հաստատում են»  
«Կալյա Ջուր» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն Կ. ԼՇՅԵ

Կ. Տ.  
\_\_\_/\_\_\_/2017թ.

**ԻՆՔՆԱԲԱՐՁԻՉ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏՈՐ ՀԱՐՄԱՐԱՆՔՈՎ ԿԱՀԱՎՈՐՎԱԾ ՇԵՂՈՒԿ ՔԼՈՐ ՏԵՂԱՓՈՒՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՑԱԳԻՐ**



Փաստաթղթի պատրաստման ամսաթիվը	Փաստաթղթի պատրաստման պատասխանատուի անունը, ազգանունը, ազգայնությունը	Փաստաթուղթը պատրաստված է 2 օրվա ընթացքում	Տարբերակ
18/12/2017	ՈԱԱ Օտարաբյուրի տնօրեն Դավիթ ՄԱՍՏՍԱՆ		Վ.02
Փաստաթուղթը կամուկանքից է Գլխավոր գործառնական տնօրեն Գ. ԳՐԿՈՂՑԱՆԻ հետ		[Ստորագրություն]	

Որակի, Առողջության և Անվտանգության Օտարաբյուրում

**VEOLIA** Ջուր **«ԵՆՈՒՄ ԶՈՒՐ» ՓԲԸ** **QFS**

«Հաստատում են»  
«Կալյա Ջուր» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն Կ. ԼՇՅԵ

Կ. Տ.  
\_\_\_/\_\_\_/2017թ.

**ՔԼՈՐԱԿԱՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՑԱԳԻՐ**



Փաստաթղթի պատրաստման ամսաթիվը	Փաստաթղթի պատրաստման պատասխանատուի անունը, ազգանունը, ազգայնությունը	Փաստաթուղթը պատրաստված է 2 օրվա ընթացքում	Տարբերակ
18/12/2017	ՈԱԱ Օտարաբյուրի տնօրեն Դավիթ ՄԱՍՏՍԱՆ		Վ.02
Փաստաթուղթը կամուկանքից է Գլխավոր գործառնական տնօրեն Գ. ԳՐԿՈՂՑԱՆԻ հետ		[Ստորագրություն]	

Որակի, Առողջության և Անվտանգության Օտարաբյուրում

**«ԲԵՐԴ» ՔԼՈՐԱԿԱՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՑԱԳԻՐ**



Փաստաթղթի պատրաստման ամսաթիվը	Փաստաթղթի պատրաստման պատասխանատուի անունը, ազգանունը, ազգայնությունը	Փաստաթուղթը պատրաստված է 2 օրվա ընթացքում	Տարբերակ
20/11/2017	ՈԱԱ Օտարաբյուրի տնօրեն Դավիթ ՄԱՍՏՍԱՆ		Վ.01
Փաստաթուղթը կամուկանքից է Գլխավոր գործառնական տնօրեն Գ. ԳՐԿՈՂՑԱՆԻ հետ		[Ստորագրություն]	

## 6.2 Դասընթացներ

● Անվտանգության և առողջության քաղաքականության կարևոր տարր է համարվում Ընկերության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման սեմինարների և կարճաժամկետ դասընթացների կազմակերպումը:

● Ելնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում առաջացած վթարների վերացման ընթացքում անվտանգության ռիսկերի բացառման և «Վեոլիա Գրուպ»-ի կողմից հաստատված «Բարձր ռիսկերի հետ կապված գործունեության կառավարման ստանդարտների» մասնավորապես «Փոտրակների և խրամուղիների անվտանգ մշակում» ստանդարտի ուսուցման մասով ներկայացվող պահանջների ապահովման անհրաժեշտությունից, ՈԱԱ Ծառայությունը ուսուսնասիրելով հողափոր մեքենաների անվտանգություն. Պահանջներ ԳՕՍՏ EN 474- 1-2013 ստանդարտի, վերոգրյալ ստանդարտի և ոլորտի վերաբերյալ ՀՀ նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջների, ինչպես նաև ոլորտի վերաբերյալ միջազգային պրակտիկան, կազմակերպում և իրականացնում է «Էքսկավատորի անվտանգ շահագործում» և «Առաջին բուժօգնության ցուցաբերում» թեմաներով շարունակական բնույթ կրող դասընթաց-սեմինարներ: Հաշվետու ժամանակահատվածում նման դասընթաց-սեմինար է իրականացվել «Արևմուտք» ՏՏ-ի թվով 20 մեխանիզատորների համար: Յուրաքանչյուր սեմինարից հետո մասնակիցները լրացրել են սեմինարների յուրացման-գնահատման նպատակով կազմված 20 հարցից բաղկացած հարցաշար:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

**«ԷՔՍԿԱՎԱՏՈՐԻ ԱՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ԵՎ «ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԵՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 12.01.2018թ.**

**Լրացված հարցաշարի արդյունքները**

Գիթրայան Դավիթ	14/20 (70%)
Միջրյան Ճաղար	18/20 (90%)
Զանկյան Տես	16/20 (80%)
Տուրադան Սերգեյ	16/20 (80%)
Միջրյան Էդուարդ	17/20 (85%)
Կարյան Տիգրան	18/20 (90%)
Միջրյան Գրիգոր	18/20 (90%)
Ազարյան Քննիկ	15/20 (75%)
Հարությունյան Արման	16/20 (80%)

Մասնակիցների կողմից դասընթացի յուրացման «մեկզգային» միջին-առավելագույն» գնահատման գրաֆիկ

Դասընթացների արդյունավետությունը և դասընթացավարի կողմից կուրսերի մատուցման մատչելիությունը ըստ դասընթացի մասնակիցների կարծիքների գնահատվեց «բարձր»

**«ԷՔՍԿԱՎԱՏՈՐԻ ԱՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ԵՎ «ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԵՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 23.01.2018թ.**

**Լրացված հարցաշարի արդյունքները**

Մանուկյան Մանվել	16/20 (80%)
Համբակչյան Հարություն	17/20 (85%)
Մարտիրոս Չրապա	18/20 (90%)
Ավետիսյան Կարոյան	18/20 (90%)
Բախաբեկյան Համբարձում	11/20 (55%)
Գևորգյան Արարիկ	13/20 (65%)
Քարամանյան Կարոյան	13/20 (65%)
Հակոբյան Մանվել	17/20 (85%)
Սարգսյան Քարամանյան	18/20 (90%)
Սարգսյան Միննիկ	18/20 (90%)

Մասնակիցների կողմից դասընթացի յուրացման «մեկզգային» միջին-առավելագույն» գնահատման գրաֆիկ

Դասընթացների արդյունավետությունը և դասընթացավարի կողմից կուրսերի մատուցման մատչելիությունը ըստ դասընթացի մասնակիցների կարծիքների գնահատվեց «բարձր»

**ՏԵՆԻՍԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԴՆԵԼԵՐ «ՎԵՈՒՆԱ ՋՈՒՐ» ՓԲԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏ-ՏԵՄՈՒՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

**QHS SERVICE**

ՓԵՏՐՎԱՐ 2018

● Հիմք ընդունելով բանվորների (փականագործների, խողովակաշարողների) և մասնագետ-տեխնիկների պաշտոնական անձնագրերը և ուսուսնասիրելով ամենօրյա կատարվող վթարավերականգնողական աշխատանքները, միջազգային և տեղական պրակտիկան, ինչպես նաև ՀՀ օրենսդրական պահանջները, «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի և «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսուսնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՖՀՄՈՒԿ) միջև նախատեսվող համագործակցության շրջանակներում ՈԱԱ Ծառայությունը մշակել է վերթվարկյալ մասնագետների մասնագիտական որակավորման դասընթացի տեխնիկական առաջադրանքը:

### 6.3 Անվտանգության ստուգայցեր

● Ելնելով Ընկերության համակարգում Անվտանգության և Առողջության ռիսկերի գնահատման, կանխարգելիչ միջոցառումների կիրառման և աշխատակիցների անվտանգության մասով հրահանգավորման գնահատման անհրաժեշտությունից իրականացրել է պլանավորված և չպլանավորված Անվտանգության ստուգայցեր թվով 23 ՕԿՁ-ների սանիտարական գոտիներում:

● Միաժամանակ ուսումնասիրվել են Ընկերության թվով 5 ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես անհատական պաշտպանության միջոցների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: [info@vjur.am](mailto:info@vjur.am)

